# ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԸ

## «ՆՈՐ ԿՅԱՆՔ» ԹԵՐԹԻ 70-ԱՄՅԱԿԸ

19-րդ դարի վերջերին Արցախի, մասնավորապես Շուշիի երիտասարդությունը առգրված էր հեղափոխական գաղափարներով։ Ըստ պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի, առաջադեմ երիտասարդներից կազմվել էր սոցիալ-դեմոկրատական խմբակ։ 1919 թվականի հունվարի 30-ին Շուշիում առաջին անգամ լույս է տեսնում այդ կազմակերպության օրգան «Նոր կյանք» շաբաթաթերթը, որը կոչված էր լուսաբանելու Արցախի հեղափոխական պրոցեսներով լի առօրյան, երկրի ներքին և արտաքին կյանքը, ժամանակի այրող հարցերը, պայքարելու աշխատավորության շահերի համար։ Սկզբնական շրջանում խմբագրությունը սուղ պայմաններ ուներ. այն տեղավորված էր Շուշիի Գյանջուցյան փողոցում գտնվող Մելիք-Հովսեփյանի տանը։ Նյութերը խմբագրում էին մեկ-երկու մարդ, մեկն էլ աշխատում էր Մելքոն Բաբաջանյանի տպարանում (կատարում էր և գրաշարի, և տպագրիչի դեր)։

«Նոր կյանքի» առաջին խմբագրականը շատ բան է ասում թերթի խնդիրների և, ընդհանրապես, նրա գործունեության նպատակի մասին։ Այն վերնագրված է «Բոպի պահանջը»։ Խմբագրականում կարդում ենք. «Հայ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, իբրև աշխատավորության շահերի պաշտպան կուսակցություն, այսօր հրապարակ է գալիս իր օրգանով՝ Ղարաբաղի աշխատավոր գյուղացիության կյանքի ուղին գծելու։ Այն անարխիան, որ տիրում է այժմ գավառում, ծայրահեղորեն վտանգում է աշխատավոր գյուղացու գրությունը։ Նրա գեպքերի շնորհիվ հրապարակ են գալիս զենքի մարդիկ, որոնց մեջ թշերը չեն իրենց շահի հետևից ընկածները, նրանք, այդ մութ անձնավորությունները, հարևաններին թալանելուց հետո կսկսեն թալանել մեզ, այդպիսով թե՛ վտանգեն գյուղացու տնտեսությունը և թե՛ նպաստեն անարխիական գրությանը»։

«Նոր կյանքը» առիթը չի կորցնում քննադատելու նրանց, որոնց մեջքով է ստեղծվել այդ գրությունը, ովքեր ընկնելով «ձրի փառքի հետևից», ձգտում են իրենց կամքը թելադրել աշխատավոր ժողովրդին։ Թերթը շեշտում է, որ այդ չի հաջողվի։ «Դրանց դեմ պիտի պայքարի ժողովրդի կազմակերպված կարծիքը, նրա ուժեղ կամքը»։

Տպագիր օրգանը մեծ հույսեր է կապում Արցախում գործող սոցիալ-դեմոկրատական կազմակերպության հետ, համոզված լինելով, որ այն «ժողովրդի կամքն ու ցանկությունները արտահայտող կազմակերպություն է, որը կարող է վերջ դնել այդ անարխիական կացությանը և ապահովել Ղարաբաղի աշխատավորության քաղաքական և տնտեսական գրությունը...»։

Թերթը ավելին է տեսնում, նա ընթերցողներին կոչ է անում կերկապակել ուժերը ոչ միայն լիակատար ազատություն ձեռք բերելու, այլև հոգեկան հարատևություն, քաղաքական բարձր մակարդակ ունենալու համար։ Նա ուղղակի գրում է. «Ղարաբաղի գյուղացին չպիտի բավականանա միայն ազատության համար պայքար մղելով. նա պիտի կարողանա իր առտնին կյանքը կուլտուրական ճանապարհով կարգավորելու։ Նա պիտի հանդես գա ոչ միայն իբրև կռվող, այլև ստեղծագործող։ Եվ այդ ստեղծագործական աշխատանքը կատարող մարմինն է, որ պետք է առաջին հերթին երևան գա մեր գավառում»։

«Նոր կյանքը» զարգացնում է իր միտքը և խոսքն ասում պարզ ու շիտակ. աշխատավորական ուժերի հաղթական պայքարով պետք է ստեղծել մի մարմին, որ օժտված լինի բանվորների և գյուղացիների շահերի արդար պաշտպանմամբ, նրանց համար նոր կյանք ստեղծելու գերագույն բազձանքով։ Արցախի սոցիալ-դեմոկրատների օրգանը գրում է. «Այդ մարմինը այսօր չկա, բայց աշխատավորությունն իր բոլոր բարոյական ուժերը պիտի հրապարակ բերե այդ մարմինն ստեղծելու։ Այդ մարմնի մեջ տեղ պիտի գտնեն աշխատավորության շահերին նվիրված ներկայացուցիչներ։ Անձնական շահերով տարված, սին փառքի հետևից ընկած անհատները չեն կարող տեղ բռնել ժողովրդական ներկայացուցչության մեջ։ Քալանի հակումներով տարվածը ոչ քաջ զինվոր կարող է լինել կըռվի դաշտում, ոչ էլ հայրենասեր գործիչ խաղաղ կուլտուրական աշխատանքի միջոցին»։

Թերթի խմբագրական հոդվածը կոչ է անում արցախցիներին պայքարել նոր կյանքի ստեղծման համար, հասնել դրան միահամուռ ուժերով՝ գործի դնելով արդարությունը, սկզբունքայնությունն ու հետևողականությունը։

«Նոր կյանքում» տպագրվող նյութերը արտացոլում էին գավառի կյանքի ամենատարբեր ոլորտները։ Թերթի մշտական խորագրերն էին՝ «Տնտեսական կյանքը», «Գավառը», «Հայ կյանքը», «Արտաքին տեսությունը», «Քաղաքական աշխարհը», «Վերջին լուրերը», «Լրատուն» և այլն։

1918—1919 թթ. Արցախի տնտեսական կյանքում հանցավոր անտարբերություն էր տիրում, որի հետևանքով թագավորում էր սովը, վարակիչ հիվանդությունները մահացությունների պատճառ էին դառնում։ Եվ այս ամենի մեջ մեծ մեղք ունեին նաև տեղական իշխանությունները, որոնց քննադատությամբ հանդես էր գալիս թերթը։ Հայ պարբերականը խարազանում էր այն զեկավարներին, որոնք սիրում էին հանդես գալ Արցախի անունից, բայց փաստորեն գործում էին ժողովրդի շահերի դեմ։

«Նոր կյանքը» գավառի աշխատավորության տնտեսական ծանր վիճակը բացատրում էր նաև համաշխարհային պատերազմի զավթողական բնույթով, որը քամում էր նյութական վերջին ամենաազատարար միջոցները։

Պարզորոշ է, որ «Նոր կյանքը» դեմ է բռնակալական, զավթողական պատերազմներին, դեմ է մի ժողովրդի կամքի բռնի թելադրմանը մյուսին, ազգի ոչ միայն տնտեսական, այլև հոգևոր մշակույթի, լեզվի, դպրոցի, լուսավորության զարգացման անազատությանը։ «Ազատությունն այս ձևով չի ըմբռնվում և չպիտի էլ ըմբռնվի, ինչպես մեզանից դարեր առաջ,— գրում է «Նոր կյանքը»։ Մի ժողովուրդ կարող է զենքը ձեռքին քաջությամբ պաշտպանել իր ազատությունը և նույնիսկ խլել այդ ազատությունը որևէ բռնակալից։ Բայց այդպիսի քաջ ու անկախ ժողովուրդը կարող է միաժամանակ սովամահության մատնվել, որի հետևանքը կլինի կա՛մ մահացում, կորուստ և կա՛մ ավելի սոսկալի սարկություն, տնտեսական կախում»։ Թերթը բարձր է գնահատում ժողովրդի ոչ թե զենքը կամ թշնամական մոլությունը, այլ նրա բանականությունը, բարեկամական առաքելությունը։

«Նոր կյանքի» էջերում անհրաժեշտաբար լուսաբանվում են արվեստի և գրականության հարցերը, լուրեր են տպագրվում մշակույթի կյանքից, առանձին հաղորդումներ արվում դպրոցական առօրյայից։

«Նոր կյանքի» նյութերը արժանանում են անդրկովկասյան հայատառ թերթերի ուշադրությանը։ «Մշակը» գրում է. «Ղարաբաղի հայ սոցիալ-դեմոկրատները Շուշիում հրատարակում են «Նոր կյանք» անունով մի շաբաթաթերթ, որի առաջին վեց համարները ստացվել են Թիֆլիսում։ Շաբաթաթերթը թողնում է լուրջ տպավորություն. նրա վերջիները քաջ ծանոթ են երևում իրենց երկրի անցյալին և ներկային, ճանաչում են Ղարաբաղի միջավայրը և բոլոր հոդվածների մեջ շանք են թափում ինքնագործունեությունն ընտելացնել գավառական հայ աշխատավորներին»։

«Նոր կյանքի» համարները անշնչելի հետք են թողել հայ պարբերական մամուլի պատմության մեջ։ Դրանք ամենից առաջ տոգորված են սեփական ժողովրդի ճակատագրի, նրա ապագայի համար ջերմ հավատով։

**Ս. ԱՎԱԳՅԱՆ**
**Պրոֆեսոր**